<<Հաստատում եմ>>
Նաիրի համայնքի ղեկավար
Ն. Սարգսյան
«05» հոկտեմբեր 2025թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
N «ԿՄՆՀ-ԳՀԽԾՁԲ-25/38»

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. **Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1**:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում **Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների կոյուղատարի և անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության** ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն:

3. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.** «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի **2025 թվականի սեպտեմբերի 5-ին** կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.** Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. **Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները. «ԿՄՆՀ-ԳՀԽԾՁԲ-25/38»** ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով **երկու** հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	**«Վանտեխ» ՍՊԸ**	vanik.harutyunyan.45@mail.ru հեռ՝.(093)74 63 56	000267668
2	**«ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ**	ekspertizaproektov@mail.ru հեռ՝.(093)80 00 09	000267915

6. **Հայտով ներկայացված գները.**

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**«Վանտեխ» ՍՊԸ**	**250 000**	-	**250 000**
2	**«ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ**	**300 000**	**60 000**	**360 000**

7. **Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.** Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի **2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 2** որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով «Վանտեխ» ՍՊԸ –ն:

8. **Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. «ԿՄՆՀ-ԳՀԽԾՁԲ-25/38»** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. **Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.**

Չափաբաժին 1

2025 թվականի հոկտեմբերի 3-ին Պատվիրատու՝ **Նաիրիի համայնքապետարանի**, որը գտնվում է **ք. Եղվարդ, Երևանյան 1** հասցեում, և Կապալառու՝ **«Վանտեխ» ՍՊԸ** -ի, որը գտնվում է **ք. Արտաշատ, Զ. Անդրանիկի փ.,տ. 7** հասցեում, միջև կնքվել է հանդիսանում **Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների կոյուղատարի և անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության** ձեռքբերման գնման պայմանագիր N **«ԿՄՆՀ-ԳՀԽԾՁԲ-25/38»**: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

10. **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.** Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. **Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.** Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Մ. Պապյան**

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)